Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ
Ն. Խ. Սարիբեկյան

«12» 03 2021թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետև՝ ԱԲՀ-ի) Մասնագիտությունների կրթական ծրագրերով կազմակերպված պրակտիկաներից ուսանողների գոհունակությունը գնահատելու հարցման կանոնակարգը սահմանում է ԱԲՀ-ի պրակտիկանտների շրջանում հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումը, որպես պրակտիկայի գործընթացի բարելավման կարևոր բաղադրիչ, անցկացվում է Կրթության մասին ՀՀ օրենքի, ԱԲՀ-ի Մասնագիտության կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի հիման վրա:

1.3. Հարցման նպատակն է՝ ստանալ տեղեկատվություն ԱԲՀ-ի պրակտիկանտների տեսական գիտելիքները գործնական փորձով ամրապնդման, պրակտիկայի գործընթացի կազմակերպման, տևողության, վայրի, պրակտիկայի ղեկավարի աշխատանքների վերաբերյալ:

2. Հարցման անցկացումը

2.1. Հարցումն անցկացվում է Համալսարանի պրակտիկանտների շրջանում՝ սույն կանոնակարգին կից ներկայացվող հարցաթերթով (Հավելված 1):

2.2. Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր պրակտիկայի ավարտից անմիջապես հետո՝ մեկ-երկու շաբաթվա ընթացքում:

2.3. Հարցումն անցկացվում է Համալսարանի Ուսումնական մասի կողմից:

2.4. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից ներկայացվող գնահատման հարցաթերթով:

2.5. Հարցումն անանուն է, անցկացվում է թղթային, ինչպես նաև առցանց եղանակով:

3. Հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Հարցման արդյունքները մշակվում և վերլուծվում են Ուսումնական մասի և Որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից:

3.3. Հարցաթերթիկներն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են բարելավմանը միտված ընդհանրացված առաջակությունների տեսքով:

3.4. Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկ ամսվա ընթացքում:

3.5. Հարցաթերթիկներում ջնջումները և ուղղումները չեն հաշվարկվում:

3.6. Գնահատված հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են Ուսումնական մասում՝ 5 տարի:

4. Հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Ուսումնական մասը հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և ֆակուլտետների պրակտիկայի պատասխանատուների հետ քննարկում և մշակում է պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

4.2. Առաջարկությունների փաթեթի հիման վրա Ուսումնական մասի կողմից մշակվում է բարելավման գործողությունների պլան և ներկայացվում ԳԽ-ի քննարկմանը:

4.3. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԱԲՀ-ի պաշտոնական կայքում:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. ԱԲՀ-ի հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԱԲՀ-ի Գիտական խորհուրդը:

5.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

Հավելված 1

«____» _____20 թ.

ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ ուսանող, ԱԲՀ-ի Ուսումնական մասը պրակտիկաների արդյունավետության բարձրացման նպատակով յուրաքանչյուր պրակտիկայի ավարտին անցկացնում է հարցում՝ կարևորելով Ձեր կարծիքն անցած պրակտիկայի վերաբերյալ: Հարցումն անանուն է, և Ձեր օբյեկտիվ կարծիքը մեզ համար շատ կարևոր է: Խնդրում ենք տրամադրել մի քանի րոպե և լրացնել սույն հարցաթերթիկը:

1. Նշեք Ձեր ֆակուլտետը

○ Բուժական գործ
○ Ստոմատոլոգիա

2. Ո՞ր կուրսում եք սովորում

---

3. Որտե՞ղ է անցկացվել Ձեր պրակտիկան

Երկիրը_____

Բուժ. հաստատությունը_____

Խնդրում ենք լրացնել հարցաթերթիկը՝ նշված հարցերը գնահատելով՝ գերազանց, լավ, բավարար, անբավարար:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/:

Բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպչական աշխատանքներից

4.	Գնահատեք՝	անբավարար	բավարար	լավ	գերազանց
4.1	կազմակերպման գործընթացը				
4.2	անցկացման վայրը				
4.3	անցկացման ժամանակահատվածը				
4.4	տևողությունը				
4.5	ծրագրի իրականացումը				
4.6	ղեկավարի աշխատանքը				

Բավարարվածությունը պրակտիկայի արդյունավետությունից

5.	Գնահատեք՝	անբավարար	բավարար	լավ	գերազանց
5.1	Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում				

5.2	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը				
5.3	Որքա՞ն էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ				
5.4	Գնահատեք պրակտիկայի ընթացքում նոր հմտությունների և կարողություն-ների ձեռք բերման Ձեր ջանքերը/ ձգտումը				
5.5	Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները				

6. Նշեք պրակտիկայի ընթացքում Ձեր ձեռքբերած ամենակարևոր գիտելիքը, կարողությունը, հմտությունը:

_____

7. Ի՞նչը կցանկանայիք փոխել պրակտիկայի կազմակերպման և անցկացման ձևաչափի մեջ:

_____

8. Արտահայտեք պրակտիկայի վերաբերյալ Ձեր կարծիքն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունները:

_____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար